

Քեզ պարտական են հնազանդութեան: Իրաւունք ունիս ապստամբները եւ դիմադրողները գանիւ, բանտիւ եւ զանազան տանջանոք պատժելու, որպէսզի անհետ ընես աշխարհքես շփոթ եւ խռովութիւն, ինչպէս պարտք է գործել թագաւորաց եւ թագաւորազանց, որ աստուծոյ կամքը կը կատարեն իբրեւ հաւատարիմ ու տիրասէր ծառայք:— Ուստի մենք Վասպուրական աշխարհի իշխանք, Նախարարք ազատաց, Մուշեղ Վահեւունեաց ցեղեն, Վահրամ Տրունեաց ազդէն եւուահրամ թիկնապահ իշխանին, եւ ուրիշ ազատաց գունդք եւ զօրականք, որ մեր ձեռքն է երկրիս հոգաբարձութիւնը, գրեցինք քեզի, Բուղայ, գլուխ տաճկաց զօրավարաց եւ բարձակից մեծ թագաւորին, միայն թէ մեզ եւ մեր տոհմին եւ մեր երկրին բնակչաց ազատ մնալ եւ խաղաղութեամբ իւրաքանչիւրս իւր տան մէջ բնակիի մենք կ'ուտանք քու ձեռքդ Աշոտ առանց քեզ փոքրիկ աշխատութիւն տալու. միայն թէ զմեզ ապստամբ չի կարծես ինքնակալ թագաւորէն ու քու ճոխութենեդ: Բայց պէտք է գիտել քեզ Նաեւ, որ իշխանիս եղբայրը Գուրգէն եւ Արծրունեաց տոհմեն շատ ուրիշներ եւ շատ բազմութիւն ազատաց, ազատորդեաց եւ քաջ զօրականաց Վասպուրական տէրութեան՝ Ատրպատականի սահմանը գնացին եւ հոն ժողուած են աշխարհիս քաջերն ու կորովիքը, որ սուրբ չեն վերադառնար, որ եթէ աս պաշարմունքը երկարի գիշերով կրնան գալ քու վրադ եւ մեծ կոտորած ու վնաս արթունի զօրաց վրայ հասցնեն, վասնզի Նա քաջ մարդ է եւ պատերազմող, եւ իրեն հետ միաբանած զօրքը կը մեռնին իրենց տան, աշխարհքին, ազգին եւ տոհմին վրայ: Ունին ձեռվնին ամուր բերդեր ինչպէս են Ջլմար եւ Սրինգ եւ Ճախուկ, եւ եթէ բոլոր իրենց զօրութիւնը միացնեն, կրնան քեզի մեծ աշխատութիւն հասցրնել եւ քու բոլոր խորհուրդներդ արգիլել, եւ մինչեւ ամօթով ու կորանոք զքեզ ետ դարձնել: Ինչպէս քեզմէ առաջ եկած «արթունի հազարապետին ըրին, վասնզի չի կրցաւ սոցայ դէմ կենալ, վասնզի այս հայոց զօրաց տասն հատին հարիւր մարդ դէմ չէ կարող դնել»:

— Ահա,— ըսաւ ծերունի դատաւորը,— այս երեք իշխանաց կնիքները. «Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի եւ Վահրամ թիկնապահ»: Տեսէք ու դատեցէք: